ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
29 հոկտեմբերի 2020 թվականի N 242-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի N 102 հրամանի՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Մարզպետարանի համակարգի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետարանի համակարգի կազմակերպություններում 2020 թվականի նոյեմբերի 1-ից անցկացնել ակտիվների և պարտավորությունների գույքագրում:
2. Կազմակերպությունների տնօրեններին՝ գույքագրումն անցկացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը և իրավաբանական բաժնին՝ գույքագրման իրականացման աշխատանքներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 29
ք. Կապան